ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԱՉԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն 4006 Տավուշի մարզ, գ. Աչաջուր հրապարակի 4, էլ. փոստ achajur.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

13 ՀՈՒԼԻՍԻ 2020Թ. ԹԻՎ 13 -Ա

ԱՉԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13 ՀՈՒԼԻՍԻ 2020Թ. ԹԻՎ 5 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով **ավագանին որոշում է.**

Հաստատել 13 հուլիսի 2020թ. թիվ 5 արտահերթ նիստի օրակարգը հետևյալ խմբագրությամբ:

ՈՐՈՇՈՒՄ

Օրակարգ.

1. Աչաջուր համայնքի ավագանու 13 հուլիսի 2020թ. թիվ 5 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Աչաջուր համայնքի 2020թ. բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:
3. COVID-19-ով պայմանավորված դրամաշնորհի տրամադրման պայմանագիր մասին:
4. Հեռագնա սարերի սահմանները ըստ սարամասի նախկին օգտատերերին հետ վերադարձնելու առաջարկություն ներկայացնելու մասին;

Ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
1. Անդրանիկ Ղալթախչյան			
2. Սմբատ Ղալթախչյան			
3. Արարատ Մելիքբեկյան			
4. Կորյուն Վարդապետյան			
5. Անուշ Վարդումյան			

Աչաջուրի համայնքապետ Կարեն Ղալթախչյան

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԱՉԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն 4006 Տավուշի մարզ, գ. Աչաջուր հրապարակի 4, էլ. փոստ achajur.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
13 ՀՈՒԼԻՍԻ 2020Թ. ԹԻՎ 14 -Ն

ԱՉԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով համայնքապետի առաջարկությունը, **ավագանին որոշում է.**

ՈՐՈՇՈՒՄ

Աչաջուր համայնքի 2020 թ. բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 01–1–1՝«Աչաջուր համայնքի կառավարման ապարատ» բաժնի 4237՝ «Ներկայացուցչական ծախսեր» հոդվածով նախատեսված 600 000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամը վերաբաշխել հետևյալ կերպ.

- նույն բաժնի 4264՝ «Տրանսպորտային նյութեր» հոդվածին հատկացնել 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ
- նույն բաժնի 4269՝ «Հատուկ նպատակային այլ նյութեր» հոդվածին հատկացնել 400 000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

Ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
1. Անդրանիկ Ղալթախչյան			
2. Սմբատ Ղալթախչյան			
3. Արարատ Մելիքբեկյան			
4. Կորյուն Վարդապետյան			
5. Անուշ Վարդումյան			

Աչաջուրի համայնքապետ Կարեն Ղալթախչյան

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԱՉԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն 4006 Տավուշի մարզ, գ. Աչաջուր հրապարակի 4, էլ. փոստ achajur.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
13 ՀՈՒԼԻՍԻ 2020Թ. ԹԻՎ 15 -Ն

COVID-19-ՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020թ. մայիսի 27-ի թիվ 867-Ն որոշմամբ COVID-19-ով պայմանավորված ինքնամեկուսացված անձանց ֆինանսական փոխհատուցման նպատակով Տավուշի մարզին դրամաշնորհի տրամադրման պայմանագիրը **ավագանին որոշում է.**

ՈՐՈՇՈՒՄ

1. ՀՀ Տավուշի մարզպետարանի և Աչաջուրի համայնքապետարանի միջև COVID-19 հիվանդությամբ պայմանավորված ինքնամեկուսացման ռեժիմում գտնվող անձանց աջակցելու նպատակով 12 հունիսի 2020թ. կնքված «Դրամաշնորհի տրամադրման» թիվ 6 պայմանագիրը համայնքի վարչական բյուջեի եկամտային մասը՝ «Այլ աղբյուրներից տրանսֆերտներ» հոդվածով, ավելացնել 117000 (մեկ հարյուր տասնյոթ հազար) ՀՀ դրամով:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված եկամուտը՝ 117000 (մեկ հարյուր տասնյոթ հազար) դրամ գումարով, տրամադրել բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 10-01-01 «Վատառողջություն» բաժնի 4729՝ «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածին:

Ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
1. Անդրանիկ Ղալթախչյան			
2. Սմբատ Ղալթախչյան			
3. Արարատ Մելիքբեկյան			
4. Կորյուն Վարդապետյան			
5. Անուշ Վարդումյան			

Աչաջուրի համայնքապետ Կարեն Ղալթախչյան

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 6

ք. Իջևան **12 հունիսի 2020 թ.**

ՀՀ Տավուշի մարզպետարանը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Ա. Գևորգյանի (այսուհետ՝ Մարզպետարան), որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա մի կողմից և Աչաջրի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Կարեն Ղալթախչյանի (այսուհետ՝ Համայնք), որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 26.12.2019թ թիվ 1919-Ն, 24.12.2003թ թիվ 1937-Ն և 27.05.2020թ թիվ 867-Ն որոշումները, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի 01.08.01 «1212. Տարածքային զարգացում» ծրագրով նախատեսված միջոցներից Մարզպետարանը դրամաշնորհի ձևով (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին» հոդվածով) ֆինանսական միջոցներ է տրամադրում Համայնքին՝ համայնքներում կորոնավիրուսային COVID-19 հիվանդությամբ պայմանավորված ինքնամեկուսացման իրավական ռեժիմում գտնվող սոցիալապես խոցելի խմբերում ընդգրկված անձանց սննդամթերքի ու սանիտարահիգիենիկ պարագաների ձեռքբերմանն աջակցելու նպատակով:

1.2 Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները տարածվում են ,,Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին,, ՀՀ կառավարության 16.03.2020թ թիվ 298-Ն որոշմամբ արտակարգ դրություն հայտարարելու օրվանից ծագած հարաբերությունների վրա:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Մարզպետարանն իրավունք ունի ցանկացած ժամանակ ստուգելու համայնքի կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.2. Համայնքն իրավունք ունի պահանջելու վճարել իրեն իրականացվելիք միջոցառման համար նախատեսված գումարը.

2.3. Մարզպետարանը պարտավոր է պայմանագիրը ստորագրելուց հետո 3-օրյա ժամկետում 3.1 կետում նշված գումարը փոխանցել համայնքի համապատասխան հաշվեհամարին:

2.4. Համայնքը պարտավոր է.

2.4.1 սույն պայմանագրով տրամադրված միջոցը ծախսել բացառապես սույն պայմանագրի 1.1 կետով նշված նպատակի իրականացման համար.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ՀՀ պարետի 10.04.2020թ թիվ Ց/56-2020 ցուցումով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով(հավելված 1).

2.4.3. յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 5 աշխատանքային օրվա ընթացքում մարզպետարան ներկայացնել հաշվետվություն իրականացված միջոցառումների վերաբերյալ /հաշվետվության մեջ պետք է ներառվեն աջակցություն ստացող անձանց անձնագրային տվյալները, փաստացի բնակության հասցեն, աջակցություն ստացողի ստորագրությունը աջակցության տրամադրման վերաբերյալ, ձևը կցվում է/.

2.4.4 իր կողմից ստացված և չօգտագործված միջոցները վերադարձնել ՀՀ պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25 -ը:

3. Տրամադրվող դրամաշնորհի չափը

3.1. Դրամաշնորհի ընդհանուր գումարը կազմում է 117000 (մեկ հարյուր տասնյոթ հազար) ՀՀ դրամ:

4. Պայմանագրի փոփոխման և լուծման կարգը

4.1. Պայմանագիրը կարող է փոփոխվել և լուծվել կողմերի համաձայնությամբ:
Պայմանագրի փոփոխման կամ լուծման վերաբերյալ համաձայնությունը կնքվում է գրավոր:
4.2. Համայնքն իրավունք ունի ցանկացած ժամանակ, մինչև դրամաշնորհները իրեն հանձնելը, հրաժարվել դրանից: Այդ դեպքում պայմանագիրը համարվում է լուծված:
4.3. Մարզպետարանը կարող է ցանկացած ժամանակ ամբողջությամբ կամ մասամբ լուծել կամ փոփոխել սույն պայմանագիրը՝ այդ մասին գրավոր ծանուցելով Համայնքին, եթե պարզվի, որ վերջինս չի կատարում սույն պայմանագրի որևէ պայման:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Այլ պայմաններ

6.1. Սույն պայմանագիրը՝ կազմված երեք էջից, ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 30-ը:
6.2. Պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնցից յուրաքանչյուրն ունի հավասարազոր իրավաբանական ուժ:
6.3. Սույն պայմանագրի բոլոր լրացումներն ու փոփոխությունները պետք է կազմվեն գրավոր, ստորագրվեն և կնքվեն կողմերի կողմից:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները

Մարզպետարան	Համայնք
ՀՀ Տավուշի մարզպետարան	Աչաջրի համայնքապետարան
ք. Իջևան, Սահմանադրության 1	գ.Աչաջուր, Հրապարակի 4
Հ/Հ 900371001547	Հ/Հ 900375126266
ՀՎՀՀ 07611324	ՀՎՀՀ 07600886
Գլխավոր քարտուղար	Համայնքի ղեկավար՝
_____ Ա. Գևորգյան	_____ Կ. Ղալթախչյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1

12-ը հունիսի 2020 թ. կնքված թիվ 6 պայմանագրի

Բժշկի ցուցումով ինքնամեկուսացված սոցիալապես խոցելի խմբերին անհրաժեշտ պարագաների քանակի և գումարների վերաբերյալ /մեկ ամսվա կտրվածքով/

Հ/Հ	Անհատական պաշտպանության միջոցի տեսակը	Չափման միավորը	1անձին 1 ամսվա համար անհրաժեշտ քանակը	Ընդամենը գումար /մեկ անձի համար, դրամ/
1	2	3	4	5
1	Օճառ	հատ	3	270
2	Լվացքի փոշի	կգ	1	380
3	Ժավել	լիտր	1	90
4	Ալկոգել	շիշ (400մլ)	1	1500
5	Զուգարանի թուղթ	հատ	1	100
6	Սպիտակ ալյուր	կգ	7	2740
7	Հաճար	կգ	1	396
8	Հնդկաձավար	կգ	2	1370
9	Ոսպ	կգ	2	1712
10	Սպիտակ բրինձ	կգ	1	769
11	Բուսական յուղ	լիտր	1	665
12	Չոր լոբի	կգ	1	1548
13	Շաքարավազ	կգ	0,5	136
14	Յոդացված աղ	կգ	0,2	27
Ընդամենը		X	X	11700

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԱՉԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն 4006 Տավուշի մարզ, գ. Աչաջուր հրապարակի 4, էլ. փոստ achajur.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
13 ՀՈՒԼԻՍԻ 2020Թ. ԹԻՎ 16 -Ա

ՀԵՌԱԳՆԱ ՍԱՐԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՍԱՐԱՄԱՍԻ ՆԱԽԿԻՆ ՕԳՏԱՏԵՐԵՐԻՆ ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, հաշվի առնելով, որ մինչև 2010 թվականի «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումը մարզպետների կառավարմանը հանձնված տարածքները նախկինում ՀՀ նախարարների խորհրդի համապատասխան որոշումներով մշտապես կցվել և օգտագործվել են համայնքների վարչական տարածքում, որի հետևանքով առաջացել են բազում խնդիրներ, որոնք հրատապ լուծման կարիք ունեն **ավագանին որոշում է.**

ՈՐՈՇՈՒՄ

1. Հարցի կարգավորման համար առաջարկել Աչաջուրի համայնքապետին ձեռնարկելու համապատասխան միջոցներ:
2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Աչաջուր համայնքի կողմից մշտապես օգտագործվող հեռագնա սարամասերում գտնվող արոտները և խոտհարքները ընդգրկվել են Դիլիջան համայնքի և Լուսաձոր համայնքի վարչական տարածքում, դիմել Դիլիջան և Լուսաձոր համայնքների ավագանիներին, տալու համաձայնություն «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում, սահմանված կարգով, ըստ սարամասերի նախկին օգտագործման սահմանների, փոփոխություններ կատարելու համար օրենքի նախագիծը ՀՀ կառավարությանը ներկայացնելու համար:
3. Առաջարկել համայնքապետին անհրաժեշտության դեպքում լրացուցիչ տրամադրել հողատարածքների հատակագծերը:

Ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
1. Անդրանիկ Ղալթախչյան			
2. Սմբատ Ղալթախչյան			
3. Արարատ Մելիքբեկյան			
4. Կորյուն Վարդապետյան			
5. Անուշ Վարդումյան			

Աչաջուրի համայնքապետ՝ Կարեն Ղալթախչյան